

Ա.Ս.Հ.Ա.ԳԻՏԱԿԱՆ

ԱՐԵԳԱԿԱՆԱՑԻՆ ԱՇԽԱԲՀ

Հանդիսիս նախընթաց թուղթի խոռտացանք , որ առանձինն յօդուածով պէտքավային աշխարհը կազմող երկնային մարմնոց վերսց մանրամասն ծանօթութիւններ հազորդեմք ընթերցողաց :

Առտղագիտութեան մէջ արեգակնային դրութիւն , կամ արեգակնային աշխարհ կրառուի աստեղաց այն խուժը , որոյ մէկ մասն է մեր երկիրը : Արեգակը այս աստեղաց կեդրոնին , կամ իրենց շարժմանց հասարակաց վառարանին վերայ է : Արեգակնային աշխարհի կազմիչ մասերն են :

Ա . Կերրուախան նարմն Ֆլ , որ վերաբերութեամբ ալոց անշարժ է խուժը ինքն մէջ . ծաւալով շատ մէծ խումբի բոլոր աստղերէն և ինքնին լուսաւոր : Այս է ԱՐԵԳԱԿ :

Բ . Հարիւր դասն և վեց երրորդական նարմններ , կամ նոլրակներ , որոնք արեգակէն առաւելական հեռաւորութեամբ շարուած են միջոցին մէջ . գրեթէ շըրջանակածեւ ոլորտներով կը դառնան արեգական շուրջը և անկէ կընդունին իրենց լցար , որով մեզ տեսանելի կը լան երկնից մէջ :

Մոլորակները երեք գլխաւոր խուժը կը բաժնուին :

1° Միջին մոլորակը . որոնք ամենէն մեծաւորներն են կեդրոնական մարմնոյն . և իրենց կարգն է . Փայլածու . Արուսեակ . Երիկը և Հրապ :

2° Մեծ մոլորակը , որոնք կեդրոնական մարմննեն առաջիններէն աւելի հեռու են , և իրենց կարգն է , Լուսնակ . Երևակ , Ուրանոս և Նեպան :

3° Փոքր նոլրակք . ասոնք ամենը Հը

րատին և Լուսնաթագին մէջ տեղն են , և նախօրնթաց մոլորակաց երկու կարգերը իրարմէ կը բաժնունեն : Մինչեւ այսօր գտնուած Փաքր մոլորակները թթով 108 հատ են , բայց անտարակայցս կան ուրիշ շատերը , որոնք հետզհետէ պիտի գտնուեն :

Գ . Տասն և ութը արբանեակներ , որոնք գլխաւոր մոլորակաց մի քանիին շուրջը կը դառնան . ինչպէս լուսինը՝ երկրին . չորս արբանեակը՝ Լուսնթագին . ութին հատ՝ Երեւակին . չորս հատ՝ Ուրանոսին :

Ութիմն արեգակնային աշխարհը կազմող մարմններն են 135 հանգերձ արեգակամբ , ոյսինքն 1 կեդրոնական գունտ , որ 116 մոլորակաց շարժմանց կ'ազդէ և 18 արբանեակը որոնք իրենց գլխաւոր մոլորակներուն հետ հինգ աշխարհներ կը ձեւացնեն , որոց իւրաքանչիւրը ընդ հանոււր մոլորակային դրութեան հետ կարի մերձ նմանութիւն մը ունի :

Նախնիք 135 աստղերէն միայն 8 հատ կը ճանաչնեն . այն է Արեգակը , Երկիրը , և Լուսինը . Փայլածուն , Արուսեակը , Հրապը , Լուսնթագը և Երեւակը , որոնք պարզ աչքով աւ կը տեսնուին : Բայց նոքա զգայարանաց պատրանացը հետեւելով Երկիրը անշարժ կը համարէին Աշխարհի կեդրոնը և կը կարձէին , որ երկրի շուրջը կը դառնան , Արեգակը , Լուսինը և միւս հինգ մոլորակները , ամեն հաստատուն կարծուած աստղերը , որոնք երկնից հեռաւորագոյն գաւառներուն մէջ կը փայլին :

Երեք դարէ ՚ի վեր է , որ Կոպեռնիկ գտաւ Աշխարհի բուն դրութիւնը . դիտակներուն գիւտով նոր մոլորակները յայտնուեցան . ինչպէս և արգէն ծանօթ մոլորակաց արբանեակները :

Աւրանոսի գտնուիլը մէկ դար չեւ
զաւ . 108 փոքր մօլորակներն ալ 1801էն
սկսեալ հետզհետէ գտնուեցան մինչեւ
մէր օրերը . իսկ Նեպտոնի գտնուիլն
երեսուն տարի եղաւ :

Մոլորակային գրութիւնը կազմող
այս ամեն երկնային մարմիններն գլուա-
ւոր երկու շարժմանց ենթակայ են :
Այս շարժմանց առաջինը այն է , որ
այս գնդակերպ մարմիններն իրենց տը-
րամուգծերուն միոյն վերայ կը դառ-
նան : Այս առաջին շարժման ենթա-
կայ են , Արեգակը , մոլորակները եւ
իրենց արբանեակիւրը :

Երկրորդ շարժմամիք , որ տարեկան
ընթացք կը սուուի , բոլոր մօլորակները
իրենց արբանեակներով Արեգական
շուրջը կը դառնան : Բայց հարկ է գիտ-
նալ , որ արբանեակները իրենց մոլո-
րակաց տարեկան ընթացքին հետևեւե-
լով հանդերձ առանձինն իրենց մոլո-
րակաց շուրջն եւս կը դառնան : Գրե-
թէ ընդունուած է , որ Արեգակն և ս
միջոցին մէջ կը շարժի :

Դ . Բաց ՚ի մոլորակներէն ուրիշ առ-
տեղաց անթիւ բազմութիւն մը եւս
Արեգական շուրջը կը դառնայ ընդ-
հանրապէս խիստ երկար ողորտներով ,
այս աստղերն են Գիսաւորները , որոնք
տեսակ մը ամպամածային աստղեր են
և կորոշուին մօլորակներէն եւ միւս
աստղերէն լուսաւոր տառնով մի , ո-
րոյ ձեւը և փոփոխ տարածութիւնները
Գիսաւորաց Արեգակէն ունեցած հե-
ռաւորութեանց համեմատ , կը փոփո-
խին : Գիսաւորներու թիւը կը նշանաւ-
կեն աստղագէտք , թէ և պատմութիւնը
անոնց առաջին անդամ երեւնալու
թուականը պահած չէ և մէք չեմք դի-
տեր թէ երբէք պիտի վերերևին . այ-
նու ամենայնիւ ասոնց մի քանիսը շատ
անդամ՝ վերերեւած են պարբերական
ժամանակամիջոցներով , և այս պատ-

ճառաւ ոմանց վերադարձ շրջանը հա-
շուած են . ուստի կարող եմք Գիսաւ-
որները համարել իբրեւ լրացացին
մասն Արեգակնային աշխարհին :

Ե . Դարձեալ մօլորակային և գիտա-
ւորացին խումբը կազմող երկնային մեծ
մարմիններէն զատ , կարի փոքր անհա-
մար մարմիններ երկնից զանազան գա-
ւառներուն մէջ կը ճանապարհորդեն .
երբեմն առանձինն , երբեմն խմբովին
միոցած , որոց վերադարձ շրջանը կա-
նոնաւոր ժամանակներու մէջ տեղի
կ'ունենայ : Երբէք այս մարմնոց գո-
յութիւնը շպիտի խմանայինք եթէ
երկրորդ իւր ոլորախն մէջ սոցա կոյտե-
րուն քովէն չանցնէր : Այս մանրամաղ
մարմիններն , որ կը քերեն և կը կորեն
մընոլորտը , անոր մէջ կը բորբոքին և
երբեմն ալ երկրին վերայ կիյնան , ա-
սմէք էն լուլ աստվելը և օդերեւոյթներուն :

Վերջապէս ՚ի բաց առեալ այս ա-
մենը , կայ նոյնպէս լուսաւոր մանեակ
մի ոսպնածեինման , որ հաւ անտկանա-
բար վերն յիշուած օգերեւոյթներուն
նման կազմուած է և կը շրջապատէ Ա-
րեգակը բաւական հեռաւորութեամբ :
Այս երեւոյթը երկրէն կը տեսնուի
տարւոյն որոշեալ ժամանակներու մէջ
հորիզոնին վերի կողմը իբրեւ լուսա-
ւոր կոն մը՝ Արեգական մանելէնյետոյ
կամ ծագելէնյաւած . այս է լուիսիոս
ըստ :

Ահաւասիկ Արեգակնային աշխարհ
հին ամբողջութիւնը :

Սցն դրութեան ուսումը կարի շա-
հաւէտ է մեզ համար . այս անհուն
տիեզերքին մէջ մէր մէծ հայրենիքն է
սոյն գրութիւնը . որովհետեւ մէր եր-
կիրը մօլորասկային ընտանեաց անդամ-
ներէն մին է : Թէ և երկիրը համեմա-
տութեամբ ամբողջ դրութեան՝ աւազի
հատիկ մի է . և նոյն իսկ գրութիւնը
Տիեզերաց համեմատութեամբ կորու-

սանելի կէտ մը, այնու ամենայնիւ ովկարող է մերժել սորա ուսումը նախքան զամենայն :

Արեգակնային աշխարհը մէկն է հաղպաւոր աշխարհաց, որոց կեդրոնական տօտովերու փայլվը կը տեսնեմք երկնից երեսը գիշերները . թերեւս մեր դրութիւնը այսչափ անհամար դրութեանց մէջ ջլլոյ ամենակարեւորը և ոչ ամենաընդարձակը . բայց մեք միայն զայն կարող եմք ճանչել իւր մանրամասնութեամբք . միայն զինքը կազմող մարմնոց շորժումներն կարող եմք ձըշտութեամբ չափել, և այնու իմանալ այն մեքենական և բնական օրէնքները, որովք կը կառավարուին, և այնու թափանցիլ տիեզերական յօրինուածին ամենաընդհանուր օրինաց : Ստոյդ է, որ Արեգակնային աշխարհէն անդին կարող է բարձրանալ և ընդարձակիլ անսութիւնը և մոտածութիւնը հեռադէանիւր չէ աներու չնորհիւ . կարող է հաստատել այնպիսի շորժումներ, որը հաղիւ ուրեմն դարերով դժուլի կը լլան . որոշել աստեղաց բնութիւնը, յայտնել կազմութիւնը այն գոյացութեանց, որոց հրաշէկ սպիտակութենէն յառաջ կը գոյ իրենց լցոր, բայց դարձեալ հարկ է, որ անհրաժեշտապէս մեզ առաջնորդէ առ այս մեր դրութեան ուսումը :

Ուստի մեք նպատակ ունենալով ընթերցող ազդայնոց աստղագիտական զանազան կարեւոր ծանօթութիւններ տալ, քաղլուածելով Գաղղիացի երեւելի հեղինակաց գործքերէն, Տիեզրաց գիտութիւններ և Արեգակնային աշխարհի անգոփի և համառօտ ծանօթութենէն յետոյ կըսկսիմք Արեգակէն և հետզհետէ յառաջ կ'երթամք :

Ա Ր Ե Գ Ա Կ Ն

Միջոցը աստղազարդող ամեն աստղերէն աւելի, Արեգակն է մարդոյ միտքը գրաւողը, և կարող եմք ըսել, առանց դիսպուածական կարծիք մը մէջ բերելու երկիւղն ունենալու, որ մի և նոյն է արեգակը միւս մոլորակաց մակերեւոյթին վերոյ ապրող էակաց համար :

Դրութեան ամեն երկնային մարմնոց շարժմանց կեդրոնը, իւր ծաւալով ամենուն վերայ տիրող ազգեցութիւն մի ունի. զանոնք կը դնէ ձեւով և տարածութեամբ գրեթէ անփոփոխ ծիրերու մէջ, այն է մեզ համար և միւս մոլորակաց բնակչաց համար վառարան անսպառելի լուսոյ, տաքութեան և հետեւաբար կենաց . Երկիրը և ամեն մոլորակային գունտերը ՚ի նըմանէ կընդունին ամեն մեքենական և տարրաբանական զօրութիւնները իբրեւ մշտաբուղլա աղքերէ զօրութեան . այլ սակայն այս ամեն մարմնոց ընդունածը նորա դուղիաքեայ մէկ մասն է :

Այս անհուն գունուի զարմանալի արագութեամբ եղած երերումներն, ամեն կողմ որ կընդհարին, երեւոյթներ կը պատճառեն, երբեմն լցու, երբեմն տաքութիւն, երբեմն տարրաբանական արգասիքներ . վերջապէս և երբեմն ալ ելեքտրական և մագնիսական հոսանքներ :

Ի՞նչ է այս զօրութեան ծագումը, որոց ազգեցութիւնը մեր երեւակայութիւնը եւ մաածութիւնը կը յուղէ . ի՞նչպէս կը նորոգի այս վառարանը, որ հաղարաւոր տարիներէ ՚ի վեր անգագար կը ճառագայթէ . Արեգակը, որ մոլորակային ամբողջ ընտանեաց համար հասարակաց հասր է, ի՞նչ օրէնքներով զանոնք իր ազգեցութեան

տակ կը պահէ . եթէ տակաւին այս հարցերը չէ լուծած գիտութիւնը , գոնէ իբրեւ լուծանելի խնդիրներ անոնց վերայ կը սբաղի . արդէն հառ տառած է մի քանի սկզբունքներ , որոնք օր մը պիտի ըլլան հիմունք տիեզերաց շարժիչ զօրութեան : Արեգական ձեւոյն , հեռաւորութեան , եւ տարածութեան վերայ աստղագիտու-

թիւնը այսօր գրական ապացոյցներ ունի . հաստատած է միջոցն սէջ անոր հողովական և թաւալական շարժումներն և հաւաքած է բնական և տարրաբանական կազմութեան և մակերեւոյթին վերայ տեղի ունեցած երեւոյթներուն վերայ շաբթ մի օգտակար գործոց . որոց հետզհետէ պիտի ծանօթացնեմք ընթերցողները .

ԱՂԱԲԻՒՐՆ ՓԻԼԻՊՊԵԱՅ^(*)

Ա.

ԽԱՂԱՂԱԿԱՆ սոսուերածու ժամ գիշերոյն փախըստեան . Հանդչի երկիր և լուսնոյն ննջեն նըշոլք ջորրան . Աստեղք յերկնից ՚ի խորան տակաւ նուաղին ետ ընդ ետ . Հսկէ և եթ արուսեակ՝ արիագեղոյն կարապետ .

Ի ջի՞նջ շառայլ լուսահետ :

Ճըպուռն յողբոց ՚ի մրմունջ երգէ ՚ի ծիլ ձիթենւոյն . Ծաղկունք ՚ի դաշտ համասփիռ փայլին ՚ի ցոլ գիշերոյն . Ու ՚ի ծոց նոցին երփնագեղ՝ ամսն խնկոց քաղցրաբոյր , Մերձի զեփիւռ փափիկաթեւ քաղել սիրուն մի համբոյր նոյն արձակել ըղունչ իւր :

(*) Փիլիպոսի աղբիւրը Երուսաղեմէն գրեթէ երկու ժամ հեռաւորութեամբ հարաւային արեւմշաեան կողմն է հովտի մը մէջ : Աւանդութեամբ կը կարծեսի թէ այս այն ջուրն է , ուր Փիլիպոսո , մին յեօթն սարկաւազաց , Եթովպիոյ կանդակայ տիկնունջ ներքինին մկրտեց : Աղբիւրը կեւայ լերան կողէն , որոյ վերայ խորանաձեւ հին ջնուածք մի կայ և շըմականերն հնութեան այլ և այլ հետքեր կը տեսնուին , ինչպէս են ամբողջ սիւներ և սեանց բեկորներ : Թիրեւս երբեմն եկեղեցի եղած մնաւ , ինչպէս իւր Արարական անունն եւս կը ցուցնէ . որ կըսուի Եյն-իւնանիչ , այսինքն այնիւու իսրայէլ կամ աղբիւր : Լերան կողը , ինչպէս զիմացի լեռներն , այզիներով ծածկած են : Աղբիւրին կից այգին և նոյն իսկ աղբիւրը Ս . Աթոռին սեփհականութիւնն է , ուր ասրին մի անդամ արձակուրդի ժամանակ ժառ . Վարժարանի աշակերտք կ'երթան , ինչպէս կ'երեւի տալաշափութենէն , Փիլիպպոսի աղբիւրը . Պաղեստինու լնդհանրապէս մերկ լերանց և անջղի հովտաց մէջ , Հայաստանի ջաւաէտ հովտաց և անտառաւաւէտ լերանց քաղցր և նուեիրական յիշատակը զարթուցանելով ներշնչած է սցն բանաստեղծութիւնը :